սովորության, թույլ էր տրվում գնալ եկեղեցի։ Այդ ծառի առջև հերթով կանգնում էին նշանված աղջիկները, կողքերին կանգնում էին փեսացուները և նրանց ազգականները, կեսրանք նվերներ էին տալիս հարսնացուներին, մի խաչաձև մոմ տալով նրանց ձեռքը։ Հաճախ մի կանաչ կամ կարմիր շարղաթ *էին ձգում նրանց գլխին, կամ հենց այդ օրը պայմանավորված նշանելիք աղջըկան եկեղեցում* խալաթ *էին տալիս։ Այսպիսով,* նշանդրէքն *ստանում էր հատկապես հրապարակային բնույթ և այդ արվում էր նախ և առաջ* կանաչող ծառի՝ ուռու *հովանավորության ներքո։ Առհասարակ ըստ ժողովրդական հասկացողության՝ այդ օրը Զանգեզուրում կապված էր ոչ թե ծաղիկների, այլ ծառի առաջին արթնացման հետ։* Ծռաննէրի *աղմուկով կարծես ետ էր մղվում չար ոգիների կողմից ամեն փորձ բույսերի, բնության այդ արթնացումը խանգարելու։ Տոնի նախաքրիստոնեական ծագումն ակներև կերպով արտահայտված է և ոչ մի կապ չունի Քրիստոսի մուտքը Երուսաղեմ ծաղիկներով դիմավորելու պատմության հետ։*

Ժամավօրնէրը *թափվում էին ծառի վրա կամ ուռիների կույտի վրա և ճյուղերն իրար ձեռքից խլելով՝ տանում էին տուն, որտեղ կախում էին* խնօցու *գլխին, նրա հարած կարագն ստուգելու և զատկական կերակրի կրակը նրանով վառելու համար։ Այս տոնը կապված էր նախնական ժամանակների* ծառէրի պաշտամունքի *և հատկապես* կենաց ծառի *պաշտամունքի հետ։*

Չարչարանաց *շաբաթ։*

ա. Երեքշաբթի՝ նիմար-իմաստունի *օր էր։ Այդ օրը տասը երեխաների ձեռքը տալիս էին մի-մի վառած մոմ, ապա հինգ թղթերի վրա «իմաստուն», հնգի վրա «հիմար» գրած՝ առաջարկում էին այդ տոմսերը մեկ-մեկ վերցնել։ «Հիմար» տոմսեր հանողների մոմերը հանգցնում էին, ծեծելով ու ծաղրելով նրանց դուրս էին վանում եկեղեցուց։ Այդ սովորությունն ամբողջովին* բխում էր Ավետարանի *առակից իմաստասերների և հիմարների մասին։ Կարող է պատահել, որ այդ առակն էլ հին հեթանոսական կրոնում ունեցել էր իր նախապատկերը, որը դեռ չի դրսևորված։*

բ. Չիք չըրըքշաբթի։ *Այդ օրը* չըքօն *էր։ Ամբողջ տունը դուրս էին տալիս, ապա կանանցից մեկը կանգնում էր տանիքի* նէրթի *մոտ, մյուսը՝ տան մեջ* նէրթի *տակ։ Տանիքին կանգնածը մի քար տանում բերում էր* նէրթի *չուրջը ու հարցնում՝*

«Աղամ, աղամ... հի՞նչ աղամ»։

Տակից մյուսը պատասխանում էր՝

— Մոկն աղա՜։

«Աղամ, աղամ... հի՞նչ աղամ»։

— Վօթիս[44] *աղա՜։*

«Աղամ, աղամ... հի՞նչ աղամ»։

— Սև պըղօճ աղա՜։

«Աղամ, աղամ... հի՞նչ աղամ»։

— Պուճուղ տակէրը[45] *աղա՜։*

Եվ այլն։

Այս հարց ու պատասխանի մագիկ նշանակությունը *պարզ է։ Ոչնչացվում էր այն ամենը, ինչի բազմանալը ցանկալի չէր։*

---

[44] Պղօն—*բողոճ։*

[45] Քունջ ու պունախի *տակերը։*